ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

18 մարտի 2014 թվականի N 14-Ա

Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 164-րդ հոդվածների դրույթներով, համաձայն <<Դարբասի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Ներսիսյանի անձնական դիմումի, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1.<<Դարբասի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Անուշ Ներսիսյանին 2014թվականի. մարտի 20-ից ապրիլի 22-ը ներառյալ տրամադրել իր ամենամյա և լրացուցիչ արձակուրդը:

Հիմք.ՀՀ աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 164-րդ հոդվածներ, Ա. Ներսիսյանի անձնական դիմումը:

2. Անուշ Ներսիսյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել ընտանեկան բժիշկ Նվարդ Սանթրյանի վրա:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2014թ. մարտի 18
ք. Կապան